

# ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆ, ՆՈՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Posted on May 6, 2010 by Keghart*



Category: [Opinions](#)



Հեղինակ՝ Արամ Սեփեթճեան, ՌՊԿ Մամուլ, Պէյրուօ, Լիբանան, 6 Մայիս 2010 **Գեղարդ կը ներկայացնէ հատուած մը Արամ Սեփեթճեանի յօդուածէն: Ամբողջական պատճենը կարելի է [ընթերցել այստեղ](#):**

*“Հարկ է կազմութիւնը Հայկական (հայրենի եւ արտերկրի) Իրաւաբանական Կաճառի մը:”*

- ✘ «Ապրիլ» ամիս ու մահուան տարելի՞ց:  
«Կոչեմ ապրողաց».- կ'արձագանգենք բանաստեղծին հրաւերին:Այս տարի կը բոլորենք 95-ամեակը 20րդ դարու առաջին մեծագոյն Յեղասպանութեան:1915 Ապրիլ 24-ով խորհրդանշուած **ճակատամարտը**, մենք ՀԱՅԵՐԱ կորսնցուցինք: Սակայն՝ **պատերազմը** մեր լինելութեան կը շարունակուի տակաւին:Մեծագո՛յնը եւ ծանրակշի՛ռը մեր կորուստին՝ ՀՈՂն էր հայրենի,- 90 առ հարիւր տոկոսը մեր պատմական հայրենիքին:

Հեղինակ՝ Արամ Սեփեթճեան, ՌՊԿ Մամուլ, Պէյրուօ, Լիբանան, 6 Մայիս 2010 **Գեղարդ կը ներկայացնէ հատուած մը Արամ Սեփեթճեանի յօդուածէն: Ամբողջական պատճենը կարելի է [ընթերցել այստեղ](#):**

*“Հարկ է կազմութիւնը Հայկական (հայրենի եւ արտերկրի) Իրաւաբանական Կաճառի մը:”*

- ✘ «Ապրիլ» ամիս ու մահուան տարելի՞ց:  
«Կոչեմ ապրողաց».- կ'արձագանգենք բանաստեղծին հրաւերին:Այս տարի կը բոլորենք 95-ամեակը 20րդ դարու առաջին մեծագոյն Յեղասպանութեան:1915 Ապրիլ 24-ով խորհրդանշուած **ճակատամարտը**, մենք ՀԱՅԵՐԱ կորսնցուցինք: Սակայն՝ **պատերազմը** մեր լինելութեան կը շարունակուի տակաւին:Մեծագո՛յնը եւ ծանրակշի՛ռը մեր կորուստին՝ ՀՈՂն էր հայրենի,- 90 առ հարիւր տոկոսը մեր պատմական հայրենիքին:

Այնտեղ, իր բնօրրանին մէջ ապրող մեր երկու միլիոն նահատակներուն հետ՝ կորո՛ւստն է նաեւ մեր դարաւոր մշակութային ժառանգութեան: Անվերականգնելին:  
Մեծ Եղեռնի 95-ամեակին, մեր ուշադրութիւնը կը սեւեռենք հիմնական հետեւեալ կէտերուն վրայ.ա) Հայկական Դատին վերլուծումն ու քննութիւնը դուրս բերել իր ներազգային նեղ պարունակէն եւ յանձնել զայն մասնագետ հայ թէ օտար իրաւաբաններէ կազմուած միջազգային չափանիշով յատուկ յանձնաժողովի մը: Երբ փոքր տարողութեամբ դատեր կ'ունենան իրենց թղթածրարներն ու փաստաբանները, ինչո՞ւ չհետապնդենք մեր Դատը բարձրագոյն մակարդակով:բ) Առ այդ, հարկ է կազմութիւնը **Հայկական** (հայրենի եւ արտերկրի) **Իրաւաբանական Կաճառ**ի մը, որ

**Վայելէ նաեւ**

ճանաչումը միջազգային ատեաններուն, եւ այս Կաճառը պաշտօնապէս հետապնդէ մեր ազգային դատը:գ) Յարդ, անտեսուած եւ ճանաչումի չարժանացած հայկական ցեղասպանութիւնը արդէն իսկ սկսած է վայելել համակրանքը մեծ տերութիւններուն: Հարկ է տեր կանգնիլ եւ աչալրջօրէն հետեւիլ Հայ Դատի զարգացումներուն: Ահաւասի՛կ, ա՛յս է պատգամը մեր նահատակներուն, որոնց յիշատակը ամէն տարի Ապրիլ 24-ին կ'ոգեկոչենք ազգովին Ծիծեռնակաբերդի Յուշարձանէն մինչեւ ծայրամասերը սփիւռքահայ գաղթօճախներուն, ուր կրկին կը բռնցքովին պահանջատեր բազուկները հայ նորահաս սերունդներուն, մինչեւ իրականացումը մեր ՄԵԾ ԵՐԱԶին:

Է.

**«ԱՆՀՊԵԼԻ» Ն՝**

Արժան եւ Իրաւ

95-ԱՄԵԱԿը Հայկական Ցեղասպանութեան, այսօր առաւել՛ քան երբեք իր ահագնութեամբ կը ցնցէ համայն աշխարհի քաղաքական Միտքն ու Խիղճը:

Համացանցային լրահոսքն ու տեղեկատու կեդրոնները, միջազգային մեզի ծանօթ օտար լեզուներով, պատմական ճշմարտութիւններու որոնումներով եւ վերլուծաբաններու յօդուած-ուսումնասիրութիւններով, առօրեայ հայ եւ միջազգային մամուլին կու տան անսպառ նիւթ, 1894-1923 տարիներուն հայ ժողովուրդին կրած **հողային, մարդկային, մշակութային եւ նիւթա-բարոյական անփոխարինելի կորուստին** եւ անով խորագրուած մեր **ազգային պահանջատիրութեան:**

«Ապրիլ 24»ը կը խորհրդանշէ Մարդկային Խիղճին բազկերակը:

Եթէ երբեք յիսուն տարիներ առաջ, մեր հայրերուն համար ան կը նշուէր իբրեւ սգատօն եւ սգահանդէս, 1965-էն ի վեր իւրաքանչիւր «Ապրիլ 24» վերածուեցաւ համազգային բողոքի, Երեւանեան համընդհանուր ու խիզախ «Մեր հողերը, Մեր Հողերը» պահանջող արդարակորով ցոյցերու:

«Ապրիլ 24»ը վերածուեցաւ Յուշարձան-Կոթողներու եւ բազմահազար ստորագրահաւաք-ԿՈՉ-երու՝ ուղղուած մեր պետութիւններու դիւանագիտական ներկայացուցիչներու:

Մեծագոյնը այս բոլորին մէջ Ծիծեռնակաբերդի Յուշարձան-Կոթողի համալիրն է, Ցեղասպանութեան նուիրուած իր թանգարանով եւ բազմարժէք հրատարակութիւններով: Ու կը շարունակուի երթը Հայուն պահանջատիրութեան եւ Ցեղասպանութեան ճանաչումին անվիճելի եւ անհերքելի վաւերականութեան:

ԱՆԿՇՈՒԵԼԻՆ ա՛յս է, որուն դիմաց ՈՉԻՆՉ կայ գայն փոխարինող:

**ԱՆՀՊԵԼԻՆ ԱՅՆ Է, որ չ'ենթարկուիր որեւէ վերստուգումի ու վերանայումի... այնքան ժամանակ երբ Արդարութիւնը իր վճիռը չ'է արձակած:**

Շուրջ յիսնամեակէ մը ի վեր, հայ ժողովուրդը, Հայաստան եւ Սփիւռք, միահամուռ կը պահանջէ Միջազգային Դատարանային հայանպաստ վճիռը, որպէսզի Հայաստան աշխարհը, իր հարեւան երկիրներու հետ կարենայ բնականոն յարաբերութիւններ մշակել:

Այսինքն, այնքան ատեն որ ցեղասպան թուրքը տակաւին պետականօրէն չ'է դատապարտած 1914-23 տարիներուն մեր պատմական հողերու վրայ գործադրուած մէկուկէս միլիոն հայերու բնաջնջումն ու կոտորածը, եւ անելի քան կէս միլիոն հայուծեան տեղահանումն ու տարագրութիւնը... ամէն ճիգ ու ջանք, ամէն տեսակի երկխօսութիւն դժուար թէ կարենայ հասնիլ իր «Բարեյուսոյ Հրուանդան»ին:

Մինչ այդ սակայն, մեր սեպուհ պարտաւորութիւնն է առարկայական ու գիտական սկզբունքայնութեամբ վերակազմակերպել մեր ազգային կառոյցները, ունենալ Համահայկական Կեդրոնական Մարմին մը, որ լայնօրէն օգտագործէ ժամանակակից համակարգչային եւ համացանցային դիւրութիւնները ու կարենայ մէկտեղել հայուծեան մարդուժը, ու մասնագիտական լիարժէք մասնակցութեամբը հայրենի թէ սփիւռքահայ հայկական գործօնին:

**Բոլորիս աչքերը ուղղուած են դէպի հայրենի պետականութիւնը:**

Սփիւռքի Նախարարութիւնը միակ վայրն է, իբրեւ Տո՛ւն ու Գրասենեակ, որ կրնայ միացնել աշխարհասփիւռ հայուծեան բաղադրատարրերը:

Եկած է ժամանակը, որ մեր Ազգային ու Պետական գաղափարախօսութիւնները չ'ըլլան երկբեւեռ, այլ՝ Առանցքը մեր քաղաքական մտածողութեան:

Հայրենի անկախ պետութիւնը վերջին տասնամեակին, Նպաստաւոր ամէն առիթ օգտագործեց «Ապրիլ 24»ը վերածելու Հայուն ազգային ինքնագիտակցութեան եւ պատմական իրաւունքներու վերատիրացման բարձրաձայն մտածողութեան:

Սփիւռքահայը, յատկապէս տարագիր՝ եւ ո՛չ թէ տարաբնակ հայը, շատ զգայուն է իր սեփական անցեալին նկատմամբ:

Ճիշդ է որ Թուրքը իլեց բռնօրէն մեր պատմական հողերը, մարդկային-մշակութային անվերադարձ եւ անհաշիւ կորուստներ արձանագրուեցան մեր հայրերու եւ մեծ հայրերու սերունդները եղան տարագիր ու գաղթական՝ մինչեւ այն ատեն՝ երբ իբրեւ Նորաբնակ, ունեցան իրենց քաղաքացիական իրաւունքները վայելելու մարդկային ամենատարրական շնորհները: Սակայն՝

Այս բոլորին մէջ, 90-ամեայ սփիւռքահայը իր մէջ պահեց ու ամրապնդեց ոգին՝  
-Ազգային ինքնաճանաչութեան եւ գիտակցութեան,

**-Իմացութիւնը հայրենի երկրին եւ**

**-Հաւատքը՝ հանդէպ իր հոգեւոր արժէքներուն:**

Այս ծիրէն ներս ունինք հսկայական գիր ու գրականութիւն, գիծ ու գեղանկարչութիւն, երգի ու գեղարուեստի բազմաձեւ արտայայտութիւն:

Սփիւռքահայր՝ որքան ալ ինքզինք զգայ իբրեւ քաղաքացի իր օտարերկրեայ բնակավայրին, սակայն ան խորապէս կը սիրէ ու կը հաւատայ իր պատմական հայրենիքին հարազատ մասնիկը եղող Հայաստան աշխարհին, անոր Ա. Բ. եւ Գ. Հանրապետութիւններու յաջորդական շրջաններով:

Արդարեւ,

Ա. Հանրապետութիւնը մեզի պարգեւեց աշխարհագրականօրէն գծուած այն հողաշերտը, որ ճանչուեցաւ համայն աշխարհի կողմէ:

Բ. Հանրապետութիւնը, պահեց եւ աճեցուց զայն, եւ 70-ամեայ իր տեւողութեամբ, 700 հազար իր ազգաբնակչութիւնը հասցուց երեքուկէս միլիոնի: Առաւել, հսկայական նուաճումներ արձանագրեց գիտութեան ու մշակոյթի բնագաւառներէն ներս:

Գ. Հանրապետութիւնը, առաւել՝ ինքնիշխան եւ անկախ, Հայուն վերադարձուց իր արմատներուն հզօրութիւնը, մեր պահանջատիրական զգացումներուն բարձրաձայն արտայայտութիւնը, սակայն, ափսո՛ս, չկրցաւ կասեցնել սպիտակ արիւնահոսութիւնը մարդուժի եւ մտաւորականի:

Գիտնանք բարձր պահել մեր Հայրենիքին, ժողովուրդին ու պետականութեան արժէքն ու արժանապատուութիւնը:

Գիտնա՛նք տե՛ր կանգնիլ մեր պատմական (առ այժմ, դեռ բռնախլուած) իրաւունքներուն:

«Ապրիլ 24» Է այսօր:

Պատմութեան բիրտ շղթային 95-րդ օղակը:

Մեր ազգային պատմութեան մեծ գիրքին 95-րդ դասաւանդութիւնը՝ ուղղուած մեզի ու մեր նորահաս սերունդներուն:

Գիտնա՛նք աշակերտել մեր ժամանակի պատմութեան դասագիրքին:

Լսենք Ձայնը ահեղ դատաստանին

Մենք՝ անցաւոր:

Յաւերժը՝ ժողովուրդ եւ Հայրենիք:



